

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

<b>Պաշտոնի / զբաղմունքի / անվանումը</b>	<b>Գազաեռակցող</b>
<b>Դերը՝</b>	Գազաեռակցողը կատարում է սև և գունավոր մետաղներից նախապատրաստվածքների եռակցում և կտրում, ինչպես տնային տնտեսություններում, այնպես էլ սպասարկման ոլորտում և արտադրությունում:
<b>Խնդիրների բնագավառները</b>	
<b>Խնդիրների բնագավառ 1. Նախապատրաստել աշխատատեղը</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Ստուգում է բոլոր ապարատներն ու սարքավորումները, գործիքները դասավորում աշխատանքի համար, տեղեկանում է անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերին և ստուգում աշխատատեղի անվտանգությունը:
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Բոլոր ապարատները և գործիքները ստուգված են:</li> <li>• Գործիքները, պարագաները որոշակի կարգով դասավորված են:</li> <li>• Աշխատատեղի անվտանգությունը ապահովված է:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 2. Նախապատրաստվածքի (մետաղի) եռակցում և կտրում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Նախապատրաստել դետալը և նախապատրաստվածքը, ըստ տեխնիկական քարտում նշված հաջորդականության հավաքում է դետալը, ընտրում է նյութեր և սարքավորումներ եռակցման համար, ընտրում է եռակցման ռեժիմ, կատարում է հավաքած դետալի եռակցում:
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Նախապատրաստվածքը կամ դետալը համապատասխանում է տեխնիկական քարտի պահանջներին և պատրաստ է եռակցման:</li> <li>• Ընտրված են եռակցման նյութերը և սարքավորումները:</li> <li>• Ընտրված են եռակցման ռեժիմները:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 3. Եռակցված շինվածքի հանձնում</b>	

<b>Աշխատանքային գործընթացը</b>	Ստուգում սարքերով և նյութերով, թերությունների վերացում և հանձնում:
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Պատրաստի շինվածքը համապատասխանում է տեխնիկական քարտի պահանջներին:</li> </ul>
<b>III. Պատասխանատվությունը և բարդության աստիճանը</b>	
<b>Բարդության աստիճանը</b>	Պարզ և միջին բարդության
<b>IV. Լեզուները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Հայերեն,</li> <li>• Օտար լեզվի մասնակի իմացություն, շփվելու և մասնագիտական գրականությունից օգտվելու համար:</li> </ul>
<b>V. Համակարգիչը</b>	<p>Microsoft Office Word</p> <p>Microsoft Office Excel</p>
<b>VI. Գիտելիքները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Մասնագիտության մեջ օգտագործվող սև և գունավոր մետաղների ու նրանց համաձուլվածքների քիմիական, մեխանիկական հատկություններին վերաբերվող գիտելիքների իմացություն:</li> <li>• Մասնագիտական գործիքների, ապարատների կառուցվածքի և օգտագործման իմացություն:</li> <li>• Մաթեմատիկական ոչ բարդ հաշվարկներ կատարելու իմացություն:</li> <li>• Մասնագիտության մեջ օգտագործվող նյութերի վերաբերյալ իմացություն:</li> <li>• Գծագրական աշխատանքներ կատարելու հիմունքների իմացություն:</li> <li>• Աշխատանքի անվտանգության և հակահրդեհային կանոնների իմացություն:</li> </ul>
<b>VII. Կարողությունները, հմտությունները և վերաբերմունքը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Տեխնիկական քարտեր կարդալու և տեխնիկական էսքիզներից օգտվելու կարողություն:</li> <li>• Նախնական էսքիզներ նկարելու և գծագրելու կարողություն:</li> <li>• Աշխատանքային անվտանգության և առողջության</li> </ul>

	<p>պահպանման նորմատիվ պահանջների իմացություն:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գազաեռակցման սարքավորումներ օգտագործելու կարողություն:</li> <li>• Գազաեռակցման գործիքներ և հանդերձանք օգտագործելու կարողություն:</li> <li>• Գազաեռակցման միջոցով ստացված արտադրանքի չափերի և որակի ստուգման կարողություն:</li> <li>• Գազաեռակցման դետալների պատրաստման համար նախատեսված ժամանակում տեխնիկական գծագրով ճշգրիտ և որակյալ կատարում:</li> <li>• Աշխատանքային օրենսգրքի նորմատիվ պահանջների իմացություն:</li> <li>• Սեփական մտահաղացումները առաջարկելու կարողություն:</li> <li>• Հանձնարարականները ժամանակին և որակով կատարելու պատրաստակամություն, հանձնարարականները ճշգրտելու կարողություն:</li> <li>• Անհատական և խմբային աշխատանք կատարելու կարողություն:</li> <li>• Մարդկանց հետ շփվելու կարողություն:</li> </ul>
<p><b>VIII. Վերաբերմունքը</b></p>	<p>Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, ճշտապահ, մաքրասեր, նորը ընկալող:</p>